Աղին

Վարչական ղեկավար՝ Արմենակ Համբարձումյան

Հեռ 093 58 50 18

Մակերես՝ 19.6կմ^2

Բնակչություն՝ 542

aghin.shirak@mta.gov.am

ՀՀ Շիրակի մարզի Անիի տարածաշրջանի Աղին գյուղը հիմնադրվել է 1872 թվակա- նին: գյուղի բնակիչները գախթել են արևմտյան Հայաստանից, հիմնականում Ղարսից և Մուշից:

Ըստ պատմական տեղեկությունների գյուղը Աղին կոչվել է նրա համար, որ գյուղում ապրել է հարկահավաքը, որին անվանել են աղա և ժողովուրդը հարկեր տալուց հարցրել են ում եք տանում, ասել են աղին, և անվանվել է Աղին: Գյուղը հիմնադրվել է 1872 թվին, բայց քանի որ կառուցվեց Ախուրյանի ջրամբարը, 1990 թվականից մա- սամբ տեղափոխվել է նոր կառուցված ավան, որի հետևանքով գյուղը բաժանվեց 4 մասի: Գյուղի հարևանությամբ է անցնում Գյումրի - Երևան երկաթգիծը, ունի երկաթու- ղային կայարան: Կայարանը հիմնադրվել է 1926 թ-ին և կոչվել է □Աղին□ կայարան: Գյուղում կա 1878 թ-ին կառուցված □Սուրբ Հակոբ□ եկեղեցին: Ունենք նաև հայկական զորամաս: 1934 թ-ից գյուղն ունի հիվանդանոց, 1998 թ-ին ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից կառուցվեց նոր առողջության կենտրոն 15 մահճակալով և ունի ծնունդ օգնության բաժանմունք: Գյուղի միջնակարգ դպրոցը հիմնադրվե ել է 1938 թ-ին այժմ ունենք 78 աշակերտ: Սովետական տարիներին գյուղն ունեցել է կոլտնտեսություն, որը միշտ եղել է առաջավորներից մեկը: 60 -ականներից գյուղն անցել է Անիի շրջանի մեջ և էլ չի եղել շրջկենտրոն:

Շիրակի մարզի Աղին գյուղը գտնվում է մարզի հարավ-արևմտյան մասում, այն գըտնվում է Ախուրյան գետի /այժմ Ախուրյան ջրամբարի/ ձախ ափին: Գյուղի հեռավորությունը Երևանից՝ 120 կմ է, Գյումրիից՝ 30 կմ: Ռեյլեֆը խայտաբղետ է, տեղումները շատ: Գյուղի աշխարհագրական դիրքը լեռնային է, կլիմայական պայմանները անբարենպաստ:
ՀՀ Շիրակի մարզ, գ. Աղին

Ինդեքս՝ 2902